

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«---» մայիսի 2014թ.

N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

**ՄԿՐՏԻՉ ՆԵՐՄԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության **1999** թվականի օգոստոսի **31**-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N **551** որոշմամբ հաստատված կարգի **2**- րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ակադեմիկոս, պատմաբան, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Մկրտիչ Ներսիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Պուշկինի փողոցի հ. **46** հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄԿՐՏԻՉ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Մկրտիչ Ներսիսյանը ծնվել է **1909**թ. նոյեմբերի **25**-ին, Աշտարակի շրջանի Փարպի գյուղում: Նախնական կրթությունն ստացել է տեղի դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել Երևանի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում, որն ավարտել է **1927**թ.: Նույն թվականին ընդունվել և **1931**թ. ավարտել է ԵՊՀ պատմագրական ֆակուլտետը:

1931-1937թթ. աշխատել է ՀԿԿ Կենտկոմին կից կուսակցության պատմության ինստիտուտում, **1938-1940**թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի (Արմֆան) պատմության և նյութական կուլտուրայի ինստիտուտում՝ որպես ավագ գիտաշխատող, **1940-1941**թթ.՝ տնօրեն:

1939թ. Մկրտիչ Ներսիսյանը պաշտպանել է թեկնածուական, **1946**թ.՝ դոկտորական ատենախոսություն:

1941-1943թթ. մասնակցել է գերմանական ֆաշիզմի դեմ մղած Հայրենական մեծ պատերազմին:

1944-1946թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի տնօրենի տեղակալ, **1946-1950**թթ.՝ ՀԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրենի տեղակալ:

1947թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1950թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս և մինչև **1962**թ. վարել հասարակական գիտությունների գծով փոխնախագահի պաշտոնը:

1962-1966թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, **1966-1977**թթ.՝ ԵՊՀ ռեկտոր:

1977թ.-ից մինչև կյանքի վերջն աշխատել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում՝ որպես հայ-ռուսական հարաբերությունների պատմության բաժնի վարիչ:

Մկրտիչ Ներսիսյանը թողել է պատմագիտական հարուստ ժառանգություն՝ հոդվածներ, փաստաթղթերի ժողովածուներ, մենագրություններ:

Մկրտիչ Ներսիսյանը գործունե մասնակցություն է ունեցել մի շարք ուսումնական ձեռնարկների և կոլեկտիվ աշխատությունների ստեղծմանը:

1961թ. Մկրտիչ Ներսիսյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Լենինի», «Աշխատանքային կարմիր դրոշի», «Ժողովուրդների բարեկամության» շքանշաններով, «Մովսես Խորենացի» և ԵՊՀ ոսկե մեդալներով:

Մկրտիչ Ներսիսյանի վախճանվել է **1999**թ. հունվարի **28**-ին Երևանում:

Մկրտիչ Ներսիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Երևան քաղաքի Պուշկին փողոցի հ. **46** հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել Երևանի պետական համալսարանի ռեկտոր Ա. Սիմոնյանի և ՀՀ քաղաքացի Գ. Ներսիսյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության **1999** թվականի օգոստոսի **31**-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N **551** որոշմամբ հաստատված կարգի **2**-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՄԿՐՏԻՉ ՆԵՐՄԻՍՅԱՆԻ ՀԻՇՍԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ
ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Մկրտիչ Ներսիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՄԿՐՏԻՉ ՆԵՐՄԻՍՅԱՆԻ ՀԻՇՍԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Մկրտիչ Ներսիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ